

ԿԱՐԳ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ, ՀԱՐՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ
ԸՆԴԳՐԿՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿԻ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտը /այսուհետ՝ Դեպարտամենտ/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության խորհուրդ ներկայացված հավակնորդների ցուցակի հրապարակման օրվան հաջորդող մեկ շաբաթվա ընթացքում գրավոր և բանավոր հարցումներ է կատարում հետևյալ հաստատություններ և վարչական մարմիններ.

- 1) հավակնորդի աշխատավայր,
- 2) հավակնորդի հետ առնչված բարձրագույն ուսումնական հաստատություններ,
- 3) հարկային մարմին:

2. Վերը նշված հաստատությունները և վարչական մարմինը համապատասխան հարցումը ստանալու պահից մեկ շաբաթվա ընթացքում պարտավոր են հայցվող տեղեկատվությունը տրամադրել Դեպարտամենտին: